

ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սփյուռքի երևելի գրողներից մեկի՝ Վազգեն Շուշանյանի (1908—1941) ձեռագրերին ասես մի դաժան նախախնամությամբ վիճակվեց իրենց իսկ հեղինակի ճակատագիրը: Նըրանց ևս տևական դեգերումներ բաժին ընկավ, նախքան կհանգրվանեին Ե. Չարենցի անվա գրականության և արվեստի թանգարանում: Ֆրանսահայ գրողի ձեռագրերի մի մասը դեռ շարունակում է իր ողիսականը, որի մասնակի լուսաբանման մի փորձ արվել է ժամանակին^{*}: Մասնակի, որովհետև ավելին թույլ չէին տալիս ձեռքի տակ եղած փաստերը: Բնավ չհստեմացնելով արդեն արվածի նշանակությունը՝ փորձենք գնալ ձեռագրերի ամենահեռավոր հետքերով:

Շուշանյանի ողբերգականորեն կարճատև, բայց փոթորկոտ ու թեղուն կյանքում եղավ մի շրջան, երբ տաղանդավոր գրողն ու քաղաքական ակտիվ գործիչը, իր իսկ բառերով ասած, հայտնվեց «անելի մը առջև»: 1933-ին հաջորդած տարիներն էին դրանք՝ Շուշանյանի կենսագրության մեջ բարդություններով և հակասություններով հողի մի ժամանակահատված, երբ տառապագին փորձեր էր անում անորոշությունը հաղթահարելու, ինքնամեկուսացումից դուրս գալու և ինքն իրեն վերագտնելու: Փոքր-ինչ ուշ՝ 1936 թ. նոյեմբերի 20-ին, «Օրագրի» նախաբանում գրում էր. «Ահա անգամ մը ևս մենակյաց մարդ մը կույս տեսրակի մը էջերուն առջև,— միակ փառասիրությամբ մը, այն է մարդկային ծայրագույն արժանավորությամբ մը ապրիլ: Այս օրագիրը կսկսիմ հուլիսով մը,— այն է քանի մը տարի ևս ապրիլ կարգ մը գրական աշխատանքներ վերամշակել կարենալու համար: Հաստատ մտադրությամբ մը,— այն է թույլ չտալ, որ սուտն ու կամավոր խելաթյուրումը սպրդին այս էջերուն մեջ¹: Անկեղծ տողերի արանքում դժվար չէ զգալ գրողի որոշակի հուսահատությունը, որ երբեմն պարտադրում էր նաև «արկածների» դիմել: Համենայն դեպս ինքը «արկած» էր համարում խորհրդային Հայաստան ներգաղթելու համար իր ջանադրությունը: 1934—35 թվականներին էր այդ: Նույն 1935-ին է ծագում նաև սեփական ձեռագրերն ապահովաբար պահ տալու խնդիրը: Տարեվերջին (դեկտեմբերի 4-ին) Շուշանյանը նամակով դիմում է Վիեննայի Մխիթարյաններին՝ խնդրելով ի պահ ընդունել ձեռագրերը՝ «շուրջ 2500 էջ,— 20-ի չափ կազմված տետրակներ» (տե՛ս հոդվածին հաջորդող Հավելվածը): Գրողին տակավին չէր լքել, թերևս, ներգաղթի մտադրությունը, որովհետև իր որոշումը պատճառաբանում էր Ֆրանսիայից «անորոշ ժամանակով» հավանական բացակայությամբ: Նամակից տեղեկանում ենք, որ նույն խնդրանքով Շուշանյանը մինչ այդ դիմել է Վենետիկի Մխիթարյան հայրերին, բայց մերժում ստացել:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվում է Վիեննայի միաբանության արքանայր Հապոզյանի պատասխանի պատճենը՝ թվագրված 11 դեկտ. 1935 թ., ուր մասնավորապես նշվում է. «Հայ գրականության մշակներու օգտակար ըլլալ կարենալը մեզի միշտ ուրախություն կպատճառե: Ուստի պատրաստ ենք ամենայն սիրով Ձեզ ալ փոքրիկ ծառայություն մը ընել և կընդունինք Ձեր առաջարկը՝ պահել Ձեր գրական աշխատանքները, իբրև ավանդ վանքիս մեջ, մինչև որ ապագային ուրիշ տրամադրություն մը հանիք ընել անոնց մասին»²: Ընդատաշելով գրողի խնդրանքին՝ վանքը հանձն էր առնում «պահանջված խնամքը» և մյուս պայմանների կատարումը՝ չստանձնելով, սակայն, մի կողմից «աննախատեսելի և վնասաբեր դեպքերու— կրակ և այլն» համար պատասխանատվությունը, մյուս կողմից՝ նյութական ծախսերը հնարավոր առաքումների համար: Փոխադարձ համաձայնությամբ պատրաստ էին ընդունել ձեռագրերը՝ կից ցուցակով, որի կրկնօրինակը պիտի պահվեր հեղինակի մոտ:

Սակայն հիշյալ դրական պատասխանից հետո պիտի անցներ գրեթե երկու տարի, մինչև կուղարկվեին ձեռագրերը: Այսօր դժվար է ենթադրություններ անել այդ հապաղման

* Տե՛ս «Բագին», 1983 թ., № 1, էջ 105—113:

¹ Վ. Շուշանյան, Օրագիր. 1936—1937—1938, Ե. Չարենցի անվան գրակ. և արվ. թանգարան, Շուշանյանի ֆոնդ, № 10 (1-ին), էջ 2:

² Գ.ԱՓ, Շուշանյանի ֆոնդ, № 22, թ. 1:

մասին: Իր մտադրությանը Շուշանյանը նախ անդրադառնում է 1937-ի մայիսին՝ անեն ճշտելու համար նախկին պայմանավորվածությունն իրագործելու հնարավորությունը, ապա օգոստոսի 4-ին Փարիզից կաշվե պայուսակով ուղարկում ձեռագրերը: Այդ հավաստում է նույն ամսաթվով նամակը: Վերջինս, ըստ էության, ի պահ տրվող նյութերի ցուցակն էր, որին հաջորդած սեղմ տողերում վերստին Շուշանյանի մտահոգություններն են ձեռագրերի ապահովության շուրջ և մասնավոր մի խնդրանք, որ առկա էր դեռ առաջին նամակում: «Պիտի ջերմորեն խնդրեմ,— գրում էր նա,— որ բացի Ձեր ճշանակած անձեն ոչ ոք իրավունք ունենա տեղեկանալու պայուսակի պարունակության: Ձեռագիրներ կան, որ հրատարակության աահմանված չեն: Հարկ եղած պարագային Ձեզի պիտի դրկեմ գոց պահարան մը, հետմահու բացվելու համար, եթե մինչ այդ ետ չպահանջեմ պայուսակս»³: Նամակի այս հատվածը հիշատակելի է առնվազն երկու առումով: Նախ, հեղինակի նախընտրած պայմանները որոշ իմաստով համընկնում են հետագայում շրջանառության մեջ դրված այն «կտակի» պահանջներին, որի իսկության մասին լուրջ կասկածներ կան: Ինչ վերաբերում է հրատարակության չսահմանված ձեռագրերին, դրանք առաջին հերթին, անշուշտ, «Ալեկոն տարիներ»-ի երկու տետրերն էին: Ինքնակենսագրական բնույթի արձակ այդ էջերի նկատմամբ միանշանակ չի եղել Շուշանյանի վերաբերմունքը: Բուն ձեռագրում ևս հեղինակը որոշ վերապահությանը է արտահայտվում այն հրատարակելու նպատակահարմարության առթիվ: Բայց առաջին տետրը բացող ընդարձակ նախաբանի վերջում այսպիսի տողեր ունի. «Հառաջիկա տարիները հղի կթվին նոր վերիվայրումներով, կրճա ըլլալ, որ այդ մթին գիշերեն հետո վերջապես ծագի ճնշված դասակարգերու ու հարստահարված ազգերու շքեղ առավոտը: Հայնժամ գուցե ընկեր մը սիրով ծոխ այս ձեռագրին վրա՝ լսելի դարձնելու համար մայր բնության ծոցը հանգչող մարդու մը ձայնը»⁴: «Ծքեղ առավոտներից» անշուշտ դեռ հեռու ենք, բայց ժամանակն է կյանքի կոչելու տարաբախտ գրողի փափագը:

Օգոստոսի 14-ի նամակով աքբահայր Հապոզյանը ծանուցում է, որ «լավ ու անվնաս վիճակի մեջ» ստացել է պայուսակը, ցուցակի համեմատությամբ ճշտել պարունակությունը: Պայուսակն իր բանալիով մնում էր աքբահոր և Ներսես վ. Ակիմյանի հսկողությանը: «Միայն Ձեր գրավոր հրահանգին վրա անոնցմե մաս մը կամ ամբողջը պիտի դրկվի Ձեր ծախքով Ձեզ կամ ցուցված հասցեին»⁵.— հավաստիացնում էին Մխիթարյանները:

Շուշանյանի հետագա նամակները պարզում են, որ տարբեր առիթներով գրողը 1938—1939 թթ. խնդրել է «Տիրուցան էջեր», «Առաջին ծիլեր», «Յնորքներու ուստայնը», «Հնչյակներ», «Սիրո ժամեր» ստեղծագործությունների ձեռագրերը: Որոշ նամակներ ունեն «Լրկեցի» մակագրությունը՝ համապատասխան ամսաթվով: Պայմանավորվածության համաձայն, հեղինակի «գրավոր հրահանգով» Համաստեղին՝ «Հայրենիք» օրաթերթի հասցեով ուղարկվել է «Դատն հաց»-ի ձեռագիրը: Նույն նամակով ցանկություն էր հայտնում ևս երկու տետր ուղարկել ի պահ: Եթե նկատի առնենք, որ դա 1939 թ. ապրիլին էր, ապա ամենայն հավանականությամբ դրանք 1936—1938 թթ. գրված «Օրագրի» երկու տետրերը պետք է լինեն: Մեկ այլ նամակով Շուշանյանն անհանգստանում էր «Յուսաբեր»-ի խմբագրությունից ստացվելիք «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգվույն խորը» վերստույնությամբ ձեռագրի համար: Մխիթարյանների մակագրությունը հուշում է, որ 1939-ի հունիսի 7-ին այն դեռ չէր ստացվել:

Շուշանյանի ծառանգության բուն ողիսականն սկսվում է նրա մահից հետո: 1942 թ. Փարիզում հրատարակվում է գրողի հիշատակին նվիրված տարաբնույթ նյութերի մի ժողովածու: «Տարաբախտ Վազգենի» հիվանդանոցային վերջին օրերը ներկայացնող Լևոն Չորմիսյանն այստեղ հիշատակում է «կտակ»-ի մասին, որն ինքը Շուշանյանի խնդրանքով իրր գրի էր առել նրա վախճանից չորս օր առաջ: Չժանրանալով այդ «կտակ» կոչեցյալի տարիներ հետո ի հայտ գալու հանգամանքների, նրա շուրջ եղած տարակարծությունների վրա (այդ հարցերը, թեև առանց ստույգ պատասխանի, բայց հանգամանալից քննվում են «Բագին»-ի վերոհիշյալ հոդվածում), անդրադառնանք մի իրողության, որը դժվար է ասել, պարզ թյուրիմացությունն է, թե՛ միտումնավոր խեղաթյուրում: 1968 թ. հրատարակած իր «Վազգեն Շուշանյան» մենագրության մեջ «կտակ»-ը վկայակոչում է նաև Գեղամ Մևանը: Ըստ այդմ, «մահվանից մի քանի օր առաջ» Շուշանյանն, իրր, «իր կտակում» գրել է. «Ձեռագիր չորս տետրակներս կտանվին Մկրտիչ Պարսամյանին քով, մեկ հատը դրկած եմ Ամերիկա՝ Համաստեղին: Կորուստե փրկելու համար զանոնք, կուզեմ, որ քոլորը հավաքվին և ուղարկվին Վիեննայի Մխիթարյան վանքը ,ուր կտանվին արդեն մեծ մասը ձեռագիր-

³ Նույն տեղը, Շուշանյանի ֆոնդ, № 16, թ. 5—6:

⁴ Վ. Շուշանյան, Ալեկոն տարիներ, 1920—1932, ԳԱԹ, Շուշանյանի ֆոնդ, № 1 (1-ին), էջ 82:

⁵ ԳԱԹ, Շուշանյանի ֆոնդ, № 22, թ. 2:

ներու: Մահես հետո մինչև քսան տարի, ոչ ոքի իրավունք կուտամ ձեռագիրներես արտատպում կատարելու մասնակի կամ ամբողջական ձևով, Վիեննայի վանքի վարչությունեն կիսմորեմ, որ ձեռագիրներս ամբողջությամբ ուղարկե Երևանի մատենադարանին: Հայաստանի մեջ կվերաբերվեն ձեռագիրներու հետ այնպես, ինչպես կցանկանամ...»⁶: Որքան էլ զարմանալի, բայց գրականագետը որպես «կտակ»-ի մեջ բերվող հատվածի աղբյուր հղում է Օուշանյանի անտիպ «Օրագիրը»՝ նշելով նույնիսկ ձեռագրի էջը՝ 179: Զարեանցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող հիշյալ «Օրագրում» նման «կտակ» չկա և չէր կարող լինել: Ինչպես արդեն նկատել ենք, այդ օրագրերը ներառում են 1936—1938 թթ., կազմում են երկու ընդհանուր տետր: Ահա երկրորդ տետրի սկզբում Օուշանյանը 1938 թ. ապրիլի 2-ի ամսաթվով հետևյալն է գրում. «Ձեռագիր աշխատանքներու վերջին ծրարը, այսօր իսկ, Վիեննայի Մխիթարյանց վանքը դրկելն հետո, կսկսիմ այս տետրակը»⁷: Մահվանից շատ ավելի վաղ ավարտած օրագրում գրողը չէ՛ր կարող և չի՛ գետնելու նման «կտակ»: Պարզ թյուրիմացություն, գրահրատարակչական վրիպակ... Դժվար է ասել: Միայն արձանագրենք, որ գրականագետի «հոյածը» նույնությամբ կրկնում է վեճերի և տարակարծությունների տեղիք տված հայտնի «կտակը»:

Անկասակած, վերջինի իսկության օգտին չէ Օուշանյանի ձեռագրերի հետագա ակտիվացումը: Հակառակ դեպքում ինչո՞վ բացատրել վստահված Մխիթարյանների կողմից ձեռագրերի հանձնումը մասնավոր անձանց: Իսկ դա սուս ենթադրություն չէ, այլ փաստագրված իրողություն:

Մեկ անհայտ պատճառներով հետագայում Օուշանյանի «ժառանգության փոխանորդ» է ճանաչվել Մկրտիչ Երիցանը (Թազընձյան): Վերջինս գրողի մորաքրոջ որդին էր, «Մարտկոց» շաբաթաթերթի պատասխանատուներից, որի գաղափարադավ գործունեությունը 1933 թ. հայտնի «Երջաբերական»-ով դատապարտում էին Լ. Մոզյանը, Ա. Աբոյանը և Վ. Օուշանյանը:

1959 թ. Բեյրոթից Ե. Երիցանցին նամակով դիմում է «Սևան» հրատարակչական տան տնօրեն Սիմոն Սիմոնյանը՝ «հուսախաբ» ու «ցաված», որ գրողի ազգականը դեռ ոչինչ չի արել ձեռագրերի հետ կապված: Ասել է, թե նախապես ինչ-որ պայմանավորվածություն է եղել, որի համաձայն Երիցանը խոստացված «գրով» պետք է դիմեր Մխիթարյաններին, անշուշտ՝ Օուշանյանի ձեռագիր ժառանգությանն առնչվող հրահանգներով: Խնդրարկում անհրաժեշտաբար չէր մոռանում հավուր պատշաճի հիմնավորումները. «Բուք, որ մեր ազգային կյանքի հիմարությունները գիտեք, պետք չէ, որ ազդվեիք: Ես Օուշանյանի ձեռագիրներեն միայն բարոյական շահ և նյութական վնաս կսպասիմ: ... Օուշանյանի հիշատակին համար պետք է որ ընեք այդ գործը»⁸: Հետևությունը մեկն է. Օուշանյանի ձեռագրերի կրթոտ «որս» էր սկսվել, որը չէր բացառում փոխադարձ կասկածներն ու բամբասանքները: Իվ Ս. Սիմոնյանը տագնապում էր, որովհետև մեկ ուրիշը՝ Փարամազ Տոնիկյանը, գործն արդեն գլուխ էր բերում: Վերջինս 1960 թ. հունվարի 23-ին Միլանից Մ. Երիցանցին մասնավորապես գրում էր. «Ստացա Ձեր համաձայնագրի մեկ պատկերը: Հաճեցեք ամբողջացնելով դրկել օրինակ մը կրկին Միլանոյի հասցեիս՝ Սրբ. Հոր վավերացման թուղթին հետ»⁹: Պահպանվել է մի կողմից «Վ. Օուշանյանի ժառանգության փոխանորդ» Մ. Երիցանցի, մյուս կողմից Փարամազ Տոնիկյանի միջև կնքված համաձայնագրի սևագիր տարբերակը: Երկրորդ կողմը հանձն էր առնում հինգ տարում ավարտել Օուշանյանի «ամբողջական գործերուն հրատարակությունը»: Համաձայնագիրն ուժի մեջ էր դրվում 1960 թ. մարտի 1-ից, երբ արդեն Բեյրոթ հասած կլինեին ձեռագրերը: Տոնիկյանն ինքը դրանք պետք է ստանար Մխիթարյաններից: Փետրվարի 5-ին նա, իրոք, միաբանությունից ստանում է ձեռագրերի պայուսակը, որի մասին ծանուցում է հաջորդ օրը Վիեննայից հղած նամակով՝ միաժամանակ ավելացնելով. «Ուրախ ենք հայտնելու նաև, մեր սույն ցուցակեն դուրս՝ Աթթահայրը հանձնեց 2—3 տարբեր ձեռագիր տետրակներ, որոնք գրագետին ցուցակին մեջ չկային. աճապարանքի մեջ մոռցա անունները առնելու և ծրարեցինք փոսթին հանձնելու. կխոստանամ Պեյրոթեն դրկելու: Մեր պայմանագրությունը ստորագրված կըզտնեք ներփակ...»¹⁰: «Ձեռագիր տետրակներից» երկուսը, որոնց անունները մոռանում է Տոնիկյանը, հավանաբար գրողի օրագրերն են, որ ցանկություն էր հայտնում միաբանության ուղարկել 1939 թ. ապրիլի 24-ի նամակով, իսկ երրորդը՝ Ծախան Ծախնուրի դեմ գրված «Մարդ մը, որ Աբարատ չունի իր հոգվույն խորը» աշխատությունը, որ «Ցուսաբեր»-ի խլմ-

⁶ Գ. Սևան, Վազգեն Օուշանյան, Երևան, 1968, էջ 66—67:

⁷ Տե՛ս ԳԱԹ, Օուշանյանի ֆոնդ, № 10 (2-րդ), էջ 2:

⁸ ԳԱԹ, Օուշանյանի ֆոնդ, № 32 գ:

⁹ Լույս տեղը, ֆ. № 32 դ:

¹⁰ Լույս տեղը, ֆ. № 32 ա:

քաղաքային պիտի հասներ Մխիթարյաններին: Բնականաբար, դրանք չէին կարող հիշատակվել 1937 թ. օգոստոսի 4-ի նամակին կից ընդհանուր ցուցակում: Ձեռագրերի հանձնումը Տոնիկյանին փետրվարի 22-ի երկտողով Երիցանցին ծանուցում էր նաև արքեպիսկոպոս Հասրոզյանը՝ վկայակոչելով «փոխանորդի» գրությունը և հունվարի 18-ի նամակը¹։

Համաձայնագիրը, սակայն, կյանքի չկոչվեց ո՛չ հինգ, ո՛չ քսանհինգ տարի անց, և մնում է գոհանալ, որ մեծատաղանդ գրողի հարուստ ժառանգությունը տևական ողիսականից հետո հանգրվանել է հայրենիքում: Ու տարագիր, եղերսբախտ Վազգեն Ծուշանյանի քախտավոր հաջորդներիս հոգևոր պարտքն է դրանց շուտափույթ հրատարակումը:

Ս. Ե. ՓԱՆՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

4 դեկտեմբերի 1935

1.

Գերաշնորհ Արքահոր Վիեննայի Մխիթարյան միաբանության

Ի Վիեննա

Գերաշնորհ հայր,

Գաղթաճայ կյանքի պայմաններու բերումով, շատ հավանորեն ստիպվիմ բացակայել Ֆրանսային անորոշ ժամանակով: Մնայուն բնակավայր չունենալով ու մյուս կողմն չուզելով հետս տանիլ, կարգ մը պատճառներով, գրական աշխատանքներս, պիտ ջերմորեն խնդրեմ Ձեզմե, որ բարի ըլլաք ի պահ ընդունել զանոնք, մասնավոր արկղի մը մեջ, որուն զույգ բանալիներեն մեկը պիտի դրկեմ ձեզի:

Այս աշխատանքները կը բաղկանան անտիպ ձեռագիրներե, շուրջ 2500 էջ,— 20 ի շափ կազմված տետրակներ,— ու զանազան պարբերականներու և թերթերու մեջ ցրված գրական էջերե, հոդվածներե, վիպակներե և այլն: Անշուշտ պիտի փափաքիմ որ բացի ձեզմե ոչ ոք իրավունք ունենա թղթատելու զանոնք: Կրնա ըլլալ նաև որ հառաջիկա տարիներու ընթացքին պետք ունենամ որևէ ձեռագրի ու զայն խնդրեմ ձեզմե, առաքելով թղթատարական ծախքը:

Շնորհակալ պիտի ըլլամ, եթե բարի ըլլաք դրական պատասխան տալ: Գրագետ բարեկամի մը թելադրության վրա վերջերս դիմած էի Վենետիկ միաբանության Արքահոր, որ Հայր Փիշիկյանի միջոցով ժխտական պատասխան տված էր ինձ: Ընդառաջ երթալով այս դիմումիս՝ կրնաք վստահ ըլլալ, թե իրական ծառայություն մը պիտի մատուցեք ինձ, ապահովելով շուրջ տասնհինգ տարիներու աշխատանքիս պահպանումը:

Կանխահայտ շնորհակալությանմբ ու հարգանքներով՝

Վազգեն Ծուշանյան

2.

Ռուսն 8 մայիսի 1937

Գերաշնորհ Հայր Հ. Հապոզյանին
Արքահայր Մխիթարյան միաբանության
Ի Վիեննա

Գերաշնորհ հայր,

Համաձայն Ձեր 11 դեկտեմբեր 1935 թվակիր նամակին՝ Ձատկի արձակուրդին Փարիզեն Վանքի հասցեին պիտի ուղարկեմ ձեռագիրներս ու հրա-

¹ Նույն տեղը, ֆ. № 82 ք:

տարակված աշխատանքներս պարունակող արկղ մը: Ու առանձին հանձնա-
րարյալ ծրարով արկղին բանալին ու այդ ձեռագիրներուն ցուցակը:

Ջերմ շնորհակալութիւններս Ձեր ազնիւ բարեհաճութեան համար, որով
հանձն կառնեք խնամքով պահել այս ավանդը: Ու հարկ եղած պարագային
իմ ծախքովս ինձ վերադարձնել զայն կամ հղել մատնանշած հասցեիս, մա-
սամբ կամ ամբողջութեամբ: Ջերմորեն պիտի խնդրեմ նաև մերթ ընդ մերթ
ստուգիլ հիշյալ տետրակներուն վիճակը, պաշտպանելու համար զանոնք, եթե
հնարավոր է, խոնավութեան դեմ:

Կրկին շնորհակալութիւն ու հարգանքներով՝

Վազգեն Շուշանյան

3.

Փարիզ 4 օգոստոս 1937

Գերաշնորհ Հայր Հապոզյանին

Արքահայր Վիեննայի Մխիթարյան

միաբանութեան

Վիեննա

Գերաշնորհ հայր,

Համաձայն Ձեր 11 դեկտ. 1935 և թիվ 264/35 նամակին՝ այսօր Ձեր հաս-
ցեին զրկեցի կաշիե պայուսակ մը հետևյալ պարունակութեամբ:

1. Ձեռագիր աշխատանքներ

- | | | |
|---|--------------------|-----------------|
| 1. Առաջին ծիւր, Յնորքներու ոստայնը, Հնչյակներ | մեկ տետր | 140 էջ |
| 2. Սիրո ժամեր, Զավեն Մանկունիի Սերերը | մեկ տետր | 120 էջ |
| 3. Երկիր հիշատակաց | մեկ տետր | 60 էջ |
| 4. Խառնիխուն | մեկ տետր | թղթակազմ 232 էջ |
| 5. Արծաթյա գիշեր | » | » 47 էջ |
| 6. Ներքին դաշտանկար | երկու տետր | 272 էջ |
| 7. Զավեն Մանկունիի սերերը (բ օրինակ) | մեկ տետր | 80 էջ |
| 8. Հաշվեհարդարը (Արծաթյա գիշեր-ի հետ) | | 50 էջ |
| 9. Բանաստեղծն ու կինը | մեկ տետր | 80 էջ |
| 10. Տենդեր | երեք թղթակազմ տետր | 390 էջ |
| 11. Ճերմակ Վարսենիկ | մեկ տետր | 192 էջ |
| 12. Դառն հացը | » | » 144 էջ |
| 13. Քրոնիկոն Քնարական | » | » 188 էջ |
| 14. Յիրուցան էջեր | » | » 116 էջ |
| 15. Ալեկոծ տարիներ | մեկ տետր | 364 էջ |
| 16. Ալեկոծ տարիներ | մեկ տետր | անավարտ 200 էջ |

2. Լույս տեսած աշխատանքներ

1. Կազմված գիրք մը «Հայրենիք ամսագրի աշխատակցութիւննս պարունակող
Ա. Սիրո և արկածի տղաքը
Բ. Զանազան բանաստեղծութիւններ
Գ. Առաջին սերը
Դ. Գորշ օրեր
Ե. Սիրո և մեղքի պարտեզը
Զ. Ցայգերգը
է. Մահվան առագաստը
2. Կազմված գիրք մը— Օրերը գեղեցիկ շին (Հայրենիք ամսագրեն)
3. Ամրան գիշերներ և Գարնանային (Կազմված)

4. Մենք-ի Ա. և Բ. թիվերը խմբագրված իմ կողմից
5. Հին երգի կտոր մըն էր
6. Մրար մը, որ կը պարունակե Մարտկոց-ի ամբողջ աշխատակցութիւնս.
— Ամարանոց այս ինձ բավական է (վիպակ)
— Գյուղաքաղաքեն հիշատակ մը (վիպակ)
— Սիրո և մեղքի պարտեզ (Սելանիկի Ալիք)
— Կաշխատինք օտար ափերու վրա (պատմվածք)
7. Մրար մը, որ կը պարունակե Դրօշակ-ի և Նավասարդ-ի աշխատակցութիւնս
Բ. Մարմին մեղապարտ (վիպակ)
Գ. Մշակույթ-ի աշխատակցութիւնս
Դ. Պոլսո Ազդարար-ի և այլ հոդվածներ
8. և 9. Երկու ծրարներ, որ կը պարունակեն զանազան օրաթերթերու մեջ լույս տեսած հոդվածներս
10. Մրար մը— Ամրան գիշերներ, հրատարակված Յուսաբեր-ի մեջ

Այսօր իսկ Ձեր հասցեին ղրկեցի միջազգային մանտայով 5 շիլինգ՝ փոխարինելու համար մաքսատուներն պայուսակը առնելու առթիվ եղած հոգնութիւնը ու ներփակ կը ղրկեմ պայուսակի բանալին:

Շատ շնորհակալ ու երախտապարտ պիտի ըլլամ, եթե սույն ձեռագիրներս ու այլ աշխատանքներս պահեք Ձեր մատենադարանին մեջ՝ խոնավութիւնի դեմ հարկ եղած միջոցները ձեռք առնելով:

Պիտի ջերմորեն խնդրեմ, որ բացի Ձեր նշանակած անձեն ոչ ոք իրավունք ունենա տեղեկանալու պայուսակի պարունակութեան: Ձեռագիրներ կան, որ հրատարակութեան սահմանված շեն: Հարկ եղած պարագային Ձեզի պիտի ղրկեմ գոց պահարան մը, հետմահու, բացվելու համար, եթե մինչ այդ ետ չպահանջեմ պայուսակս:

Երախտապարտ պիտի ըլլամ, եթե ընդփույթ իմացնեք ինձ, օգտագործելով ներփակ պահարանները, ձեռագիրներուն ապահով ու լավ վիճակի մեջ հասնիլը, հաստատեք վերոգրյալ ցուցակին մեջ եղած նյութերուն ստացված ըլլալը ու տաք Ձեր նշանակած հոր անունը, որուն հետ հետ այսու պետք պիտի ունենամ թղթակցելու, եթե որևէ ձեռագրի պետք ունենամ:

Ձերմ շնորհակալութիւնս հայտնելով այս տարագիր թղթերուն Ձեր շնորհած ասպնջականութեան համար ու խորին հարգանքներով Ձերդ՝

Վազգեն Շուշանյան

4.

Ռուան 20 փետրվար 1938

Գերաշնորհ հայր Հ. Հապոզյանին

Մխիթարյան վանք

Վիեննա

Գերաշնորհ հայր,

Ձերմորեն շնորհակալ պիտի ըլլամ, եթե բարեհաճիք, անհապաղ ու հանձնարարյալ ծրարով, ստորև նշանակած հասցեիս ուղարկել տալ ինձ Ցիրուցան էջեր խորագիրը կրող տետրակս: Կ'ը լս՝ ղրեմ հանձնարարել խնամքով պատրաստել ծրարը:

Սույն առիթեն կօգտվիմ՝ վերստին շնորհակալութիւնս հայտնելու համար Ձեր ինձ ընծայած ծառայութեան համար:

Եթե առաքման ու այլ ծախքերու համար որևէ գումար կը պարտիմ Ձեզի, բարի եղեք նշեի:

Հարգանքներով՝

Վազգեն Շուշանյան

5.

Ռուան — 24 ապրիլ 1939

Գերաշնորհ Հ. Հապոզյանին

Աբբահայր Վիեննայի Մխիթարյան

միաբանության

Գերաշնորհ Հայր,

Շնորհակալ պիտի ըլլամ, եթե հաճիք գրագետ Համաստեղի անվան, Հայ-
րենիք օրաթերթի հասցեով, ղրկել տալ Դառն հացը խորագիրը կրող ձեռագիրս, հանձնարարյալ ծրարով, — անշուշտ եթե վստահ եք, թե կարելի է այդ առաքումը ընել: Ու այս առթիվ ինձ իմացնել՝ թե կրնա՞մ ուրիշ երկու տետրակներ ղրկել ձեզի: Ու հա՞րկ է, որ նոր գումար մը ղրկեմ նման ծախքերու համար:

Կրկին շնորհակալութեամբ ու հարգանքներով՝

Վազգեն Շուշանյան

6.

Գեր. Հ. Հապոզյանին*

Աբբահայր Վիեննայի Մխիթարյան

Միաբանության

Գերաշնորհ հայր.

Շնորհակալ պիտի ըլլամ, եթե հանձնարարյալ ծրարով բարի ըլլաք ինձ ղրկել տալ՝ հետևյալ երկու տետրակները.

1. Առաջին ծիւեր, Յնորքներու ոստայնը, Հնչյակներ

2. Միրո ժամեր

Անշուշտ ստացաք ղրկած գումարս: Համաստեղին այսօր նամակ մը ստացա, որով ինձ կ'իմացնե, թե պահած է Դառն հացը խորագիրը կրող տետրակը:

Կանխահայտ շնորհակալութեամբ ու հարգանքներով՝

Վազգեն Շուշանյան

7.

Ռուան — 4 հունիս 1939

Գեր. Հայր Հ. Հապոզյանին

Աբբահայր Մխիթարյան Միաբանության

Վիեննա

Գերաշնորհ հայր,

Համաձայն Ձեր հանձնարարության՝ ուսանող բարեկամի մը միջոցով, որ կապրի Հայտելպերկ, Ձեր հասցեին փոխադրեցի խնդրո առարկա փոքրիկ գումարը: Շնորհակալ պիտի ըլլամ, եթե հայտնեք ստացված ըլլալը: Ու առի-

* Յ-րդ Ձեռնակը ամառով չունի: Բովանդակությունը Ռուշում է Արա Բնարավոր Ռաշոթականությունը:

Թե՛ն օգտվելով պիտի խնդրեմ նաև, որ բարեհաճիք իմացնել ինձ, թե Համաստեղին ետ ստացած եք զրկված տետրակը Դառն հացը խորագրով: Յուսարերի խմբագրութունը ևս Ձեր հասցեին պիտի զրկե ձեռագիր մը՝ Մարդ մը, որ Արարատ շուրի իր հոգվույն խորը մակագրությամբ: Ուրախ պիտի ըլլամ իմանալով, թե այս երկու աշխատանքները ապահով վիճակի մեջ վերադարձած են: Ծնորհակալությամբ ու հարգալից զգացումներով՝

Վազգեն Շուշանյան

С. Е. ФАНОСЯН — По следам рукописей Вазгена Шушаняна. — Видный зарубежный армянский писатель Вазген Шушанян (1903—1941) оставил богатое литературное наследство, большая часть которого еще не опубликована. Еще при жизни писатель отпраздил свои рукописи на хранение в Венское аббатство Мхитаристов, они прошли долгую одиссею, прежде чем найти пристанище в Музее литературы и искусства им. Е. Чаренца в Ереване. В работе прослеживается загадочный и трудный путь шушаняновских рукописей на родину, впервые публикуются некоторые письма автора аббату-мхитаристу Апозяну.